# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան 3/15, Հեռ. 0231-6-38-10, 094 80 53 63, mrgastan.armavir@mta.gov.am

N 84
*10 հունիս 2020թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Օրենքով սահմանված կարգով Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի կողմից հունիսի 1-7 ընկած ժամանակահատվածում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Ղարիբյան*
*023163810*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«1» հունիսի 2020թվական թիվ 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» հոդված 7-ի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հոդված 43-ի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 1920-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի վարչական տարածքում գտնվող Նշան Մայիսի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-068-0110-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.79հա. հողամասից 0.4հա. վրա ջերմոցային տնտեսություն հիմնելու և կառուցապատում իրականացնելու նպատակով նշված 0.4հա. գյուղատնտեսական նշանակության հողատեսքի գործառնական նշանակությունը փոխել՝ արտադրականի /ջերմոցային տնտեսություն/:
2.Կատարել՝ համապատասխան փոփոխություն համայնքի հողային ֆոնդի հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 1
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» հունիսի 2020թվական թիվ 16

### ՌԱՖԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 101-ով և հիմք ընդունելով Ռաֆիկ Գարեգինի Ներսեսյանի դիմումը՝ իրեն կոյուղահորերի մաքրման աշխատանքներում ներգրավվելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կնքել՝ «Ծառայությունների մատուցման ժամանակավոր աշխատանքային պայմանագիր» Ռաֆիկ Գարեգինի Ներսեսյանի հետ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում խցանված կոյուղահորերի մաքրման համար:
2.Ռաֆիկ Գարեգինի Ներսեսյանը անցնի իրեն «Աշխատանքային պայմանագրով» սահմանված պարտականությունների կատարմանը՝ 1 հունիսի 2020թվականից, 15 աշխատանքային օր ժամկետով:
3.Աշխատավարձի չափ սահմանել՝ 40 000 /քառասուն հազար/ դրամը:
4.Հանձնաժողովին հսկել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը և զեկուցել կատարված աշխատանքի վերաբերյալ:
5.Հաշվապահին կատարել վճարում՝ օրենքով սահմանված կարգով համաձայն պայմանագրի:
6.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 1
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» հունիսի 2020թվական թիվ 17

## ՄԱՆՎԵԼ ԱՐՄԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մանվել Արմենի Ասատրյանի դիմումը՝ իրեն աշխատանքից ազատելու մասին.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի սեզոնային աշխատանքներ իրականացնող բանվոր Մանվել Արմենի Ասատրյանի հետ կնքած «ժամկետային աշխատանքային» թիվ 6 պայմանագիրը, 1-ը հունիսի 2020թվականից:
2.Հաշվապահին՝ կատարել վճարում օրենքով սահմանված կարգով:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 1
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» հունիսի 2020թվական թիվ 18

ԱՐՏՈՒՐ ՄԻԽԱՅԻԼԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 100-ով և հիմք ընդունելով Արտուր Միխայիլի Սարուխանյանի դիմումը՝ համայնքում իրականացվող բարեկարգման աշխատանքներում իրեն ընդգրկելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Արտուր Միխայիլի Սարուխանյանի հետ, կնքել՝ «ժամանակավոր աշխատանքային պայմանագիր» համայնքում իրականացվող բարեկարգման աշխատանքներում, որպես սեզոնային աշխատանքներ կատարող բանվոր:
2.Արտուր Միխայիլի Սարուխանյանը անցնի իրեն «Աշխատանքային պայմանագրով» սահմանված պարտականությունների կատարմանը՝ 1 հունիսի 2020թվականից:
3.Աշխատավարձի չափ սահմանել 92 700 /իննսունևերկու հազար յոթ հարյուր/ դրամը:
4.Արտուր Միխայիլի Սարուխանյանը նյութական պատասխանատու է հանդիսանում համայնքապետարանից ստացած գյուղատնտեսական գործիքների համար:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 1
Մրգաստան համայնք